4267	-Կենցաղային և հանրային անոթի նյութեր	4267	1 900 000.00	1 900 000.00	0.00	X	1 900 000.00	1 900 000.00	X	1 267 400.00	1 267 400.00	X
4268	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	1 640 000.00	1 640 000.00	0.00	X	1 640 000.00	1 640 000.00	X	333 500.00	333 500.00	X
4500	1.5 ԴՐԱՄԱՆՆՈՐՉՆԵՐ (տող4510+տող4520+տող4530+տող4540)		50 000 000.00	50 000 000.00	0.00	X	70 850 600.00	70 850 600.00	X	52 644 360.00	52 644 360.00	X
	այդ թվում՝											
4530	ԸՆԹՅՈՒԿ ԴՐԱՄԱՆՆՈՐՉՆԵՐ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅՆ ՄԱԿԱՐԴԱՆԵՐԻՆ (տող4531+տող4532+տող4533)	x	48 000 000.00	48 000 000.00	0.00	X	68 850 600.00	68 850 600.00	X	52 644 360.00	52 644 360.00	X
	դրից՝											
4531	- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4637	48 000 000.00	48 000 000.00	0.00	X	68 850 600.00	68 850 600.00	X	52 644 360.00	52 644 360.00	X
4540	ԿՄԴԻՏԱԼ ԴՐԱՄԱՆՆՈՐՉՆԵՐ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅՆ ՄԱԿԱՐԴԱՆԵՐԻՆ (տող4541+տող4542+տող4543)	x	2 000 000.00	2 000 000.00	0.00	X	2 000 000.00	2 000 000.00	X	0.00	0.00	X
	դրից՝											
4541	-Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	4655	2 000 000.00	2 000 000.00	0.00	X	2 000 000.00	2 000 000.00	X	0.00	0.00	X
4600	1.6 ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող4610+տող4630+տող4640)	x	3 600 000.00	3 600 000.00	0.00	X	3 200 000.00	3 200 000.00	X	1 100 000.00	1 100 000.00	X
4630	ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԸՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԱՏԻՎԱՅՈՐԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) (տող4631+տող4632+տող4633+տող4634)	x	3 600 000.00	3 600 000.00	0.00	X	3 200 000.00	3 200 000.00	X	1 100 000.00	1 100 000.00	X
	դրից՝											
4631	-Հուղարկվողության նպաստներ բյուջեից	4726	100 000.00	100 000.00	0.00	X	100 000.00	100 000.00	X	0.00	0.00	X
4632	-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4633	-Բնակարանային նպաստներ բյուջեից	4728	0.00	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	3 500 000.00	3 500 000.00	0.00	X	3 100 000.00	3 100 000.00	X	1 100 000.00	1 100 000.00	X
4700	1.7 ԱՅՆ ԾԱԽՍԵՐ (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770)	x	8 084 189.60	8 084 189.60	0.00	0.00	906 189.60	2 456 189.60	0.00	731 000.00	731 000.00	0.00

5121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	15 000 000.00	X	15 000 000.00	12 000 000.00	X	12 000 000.00	0.00	X	0.00
5122	- Վարչական սարքավորումներ	5122	4 500 000.00	X	4 500 000.00	4 500 000.00	X	4 500 000.00	226 100.00	X	226 100.00
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00
5130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵ (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134)	x	4 710 000.00	X	4 710 000.00	6 945 000.00	X	6 945 000.00	2 235 000.00	X	2 235 000.00
	դրից՝										
5131	-Աճեցվող ակտիվներ	5131	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00
5132	- Ոչ կյուլթական հիմնական միջոցներ	5132	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00
5133	- Չեղդեցիական քարտեզագրական ծախսեր	5133	1 210 000.00	X	1 210 000.00	1 210 000.00	X	1 210 000.00	0.00	X	0.00
5134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	3 500 000.00	X	3 500 000.00	5 735 000.00	X	5 735 000.00	2 235 000.00	X	2 235 000.00
5200	1.2 ՊԱՇՏՈՐՆԵՐ (տող5211+տող5221+տող5231+տող5241)	x	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏԵՐ (տող6100+տող6200+տող6300+տող6400)	x	-135 210 000.00	X	-135 210 000.00	-135 210 000.00	X	-135 210 000.00	-6 303 530.00	X	-6 303 530.00
	այդ թվում՝										
6400	ՉԱՐՏԱՐԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏԵՐ՝ (տող6410+տող6420+տող6430+տող6440)	x	-135 210 000.00	X	-135 210 000.00	-135 210 000.00	X	-135 210 000.00	-6 303 530.00	X	-6 303 530.00
	այդ թվում՝										
6410	Հորի. ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏԵՐ	8411	-135 210 000.00	X	-135 210 000.00	-135 210 000.00	X	-135 210 000.00	-6 303 530.00	X	-6 303 530.00
6420	ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆՐԱՊՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏԵՐ	8412	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00
6430	ԱՅԼ ԲԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏԵՐ	8413	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00
6440	ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՉԱՐՏԱՐԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏԵՐ	8414	0.00	X	0.00	0.00	X	0.00	0.00	X	0.00

ՀՀ ֆինանսների նախարար, 207065, Քասախ
 Հաշվետվություն
 Համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (Դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների
 (02/01/17 - 02/10/17թ. ժամանակահատվածի համար)

Տողի NN	Տարեկան հաստատված պլան			Տարեկան ջնջված պլան			Փաստացի					
	ադր թվում	Ընդամենը (ս.5+ս.6)	ադր թվում	Ընդամենը (ս.8+ս.9)	ադր թվում	ադր թվում	Փոխդրային մաս	վարչական մաս	Ընդամենը (ս.11+ս.12)	ադր թվում		
աձևավորումները												
1	2	NN	3	4	5	6	7	8	9	10	11	12
8000	ԸՆԴԱՄԵՆԸ՝ (տող 8100+տող 8300), (տող 7000 հավառակ նշանով)		3	119 123,70	12 189,60	106 934,10	119 123,70	12 189,60	106 934,10	-2 033 296,00	-1 890 886,00	-142 430,00
	այդ թվում՝											
8100	Ա. ՆԵՐՔԻՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160),(տող8000-տող8300)			119 123,70	12 189,60	106 934,10	119 123,70	12 189,60	106 934,10	-2 033 296,00	-1 890 886,00	-142 430,00
8160	2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող8161+տող8170+տող8190+տող8201+տող8202+տող8 203)			119 123,70	12 189,60	106 934,10	119 123,70	12 189,60	106 934,10	-2 033 296,00	-1 890 886,00	-142 430,00
	այդ թվում՝											
8190	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեկազգի ազատ մնացորդը՝ (տող 8191+տող 8196-տող 8193)			119 123,70	12 189,60	106 934,10	119 123,70	12 189,60	106 934,10	119 123,70	12 189,60	106 934,10
	այդ թվում՝											
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեկազգի ազատ մնացորդ (տող 8194+տող 8195)	9320		12 189,60	12 189,60	X	12 189,60	12 189,60	X	12 189,60	12 189,60	X
	որից՝											
8192	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակման չֆինանսավորման չունի			12 189,60	12 189,60	X	12 189,60	12 189,60	X	12 189,60	12 189,60	X
8193	- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192)			0,00	0,00	X	0,00	0,00	X	0,00	0,00	X
8194	2.3.1.1. Համայնքի բյուջեի վարչական մասի տարեկազգի ազատ մնացորդ՝ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ	9321		12 189,60	12 189,60	X	12 189,60	12 189,60	X	12 189,60	12 189,60	X
8195	2.3.1.2. Համայնքի բյուջեի վարչական մասի տարեկազգի ազատ մնացորդ՝ ձևավորված բացառապես նախորդ տարվա համայնքի բյուջեի վարչական մասի ծախսերի	9322		0,00	0,00	X	0,00	0,00	X	0,00	0,00	X

8196	2.3.2. Համայնքի բյուջեի ֆորտային մասի միջոցների տարեկան մնացորդ (տող 8197 + տող 8200)	9330	106 934, 10	0,00	106 934, 10	106 934, 10	0,00	106 934, 10	0,00	106 934, 10	0,00	106 934, 10
	որից՝											
8197	- առանց վարչական մասի միջոցների տարեկանի ազատ մնացորդից ֆորտային մաս մուտքագրման ենթակա գումարի (տող 8198+տող 8199)		106 934, 10	X	106 934, 10	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10
	այդ թվում՝											
8198	Համայնքի բյուջեի ֆորտային մասի տարեկանի ազատ մնացորդ՝ հաշվետվու տարվա հունվարի 1-ի դրությամբ	9331	106 934, 10	X	106 934, 10	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10	X	106 934, 10
8199	Համայնքի բյուջեի ֆորտային մասի տարեկանի ազատ մնացորդ՝ ձևավորված բացառապես նախորդ տարվա համայնքի բյուջեի ֆորտային մասի ծախսերի	9332	0,00	X	0,00	0,00	X	0,00	X	0,00	X	0,00
8200	- վարչական մասի միջոցների տարեկանի ազատ մնացորդից ֆորտային մաս մուտքագրման ենթակա գումար (տող 8193)		0,00	X	0,00	0,00	X	0,00	X	0,00	X	0,00
8201	2.4. Համայնքի բյուջեի ֆորտային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս		X	X	X	X	X	X	X	0,00	0,00	0,00
8202	2.5. Համայնքի բյուջեի ֆորտային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների մեղադրում ֆորտային մաս		0,00	X	0	0,00	X	0	X	0,00	0,00	0,00
8203	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող 8000- տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 8201- տող 8202 -		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	-2 152 419,70	-1 903 055,60	-249 364,10
8204	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեկանի ազատ մնացորդի գումար		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00		
8300	Բ. ԱՐՏԱՅԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ (տող 8310)		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
8310	1. ՓՈՒՍԱՊՈՒՄԻ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8311+տող 8320)		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
	որից՝											
8322	- վարկերի ստացում	9122	0,00	X	0,00	0,00	X	0,00	X	0,00	X	0,00
8330	- ստացված վարկերի հիմնական գումարի մարում	6122	0,00	X	0,00	0,00	X	0,00	X	0,00	X	0,00
8340	1.2.2. Փոխառություններ (տող 8341+տող 8350)		0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
	որից՝											
8341	- փոխառությունների ստացում	9122	0,00	0,00	X	0,00	0,00	X	0,00	0,00	0,00	X
8350	- ստացված փոխառությունների գումարի մարում	6122	0,00	0,00	X	0,00	0,00	X	0,00	0,00	0,00	X



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 48-Ն

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ Քասախ համայնքի ավագանին որոշում է՝

Քասախ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «Քասախ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 61-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՂՐԱԿ

4. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

7. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝


ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ

Հավելված
Քասախ համայնքի ավագանու 2017
թվականի հոկտեմբերի 2 -ի N 48-Ն
որոշման


Հավելված
Քասախ համայնքի ավագանու 2016
թվականի դեկտեմբերի 28 -ի N 61-Ն
որոշման

Ծրագիր	Հոդված	Հոդվածի անվանումը	02.10.2017թվ- ի դրությամբ	պակասեց ում /-/ կամ ավելացում ///	ճշտված բյուջե
	1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	4650,0	+236,8	4886,8
		Ընդամենը եկամուտներ	4650,0	+236,8	4886,8
		Ծախսային մաս			
01-6-1	4111	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ	0,0	+236,8	236,8
		Ընդամենը ծախսեր	0,0	+236,8	236,8
		Ընդամենը	-4650,0	0,0	-4650,0

Քասախ համայնքի ղեկավար՝



Ա. Մկրտչյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 49

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ
հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի
առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքային սեփականություն
համարվող գույքի և հողերի օտարման ցանկը և դրանց մեկնարկային գները՝ համաձայն
հավելվածի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

3. ԽԱԶԱՏՅԱՆ ՍԵՂՐԱԿ

4. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

7. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՍԱ


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ


ՀԱՎԵԼՎԱԾ
Քասախ համայնքի ավագանու 2017 թվականի
հոկտեմբերի 02-ի N 49 որոշման

h/h	ԾԱԾԿԱԳԻՐԸ	ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ Ը	ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՄԱԿԵՐԵՍԸ	ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ
1	07-065-0053-0031	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	0.02002 հա	905705 դրամ
2	07-065-0053-0030	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	0.016 հա	723840 դրամ
3	07-065-0036-0039	բնակավայրերի	հասարակակա կառուցապատման	0.0234 հա	1058616 դրամ
4	07-065-0036-0040	բնակավայրերի	հասարակակա կառուցապատման	0.01 հա	271440 դրամ
5	07-065-0707-0002	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	0.01656 հա	412046 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 50-Ն

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է*.

1. Սահմանել Քասախ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշում ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՂԲԱԿ

4. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂԲԱԿ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅԾԱՌ

7. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ

Հաղելված
ՀՀ Ներքին գործերի նախարարության
Կոտայքի մարզի Քառասն համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 2-ի
N 50-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ
ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ**

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Քասախ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Քասախ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև քաղաքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Քասախ համայնքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝

1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կամ ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը:

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատում.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

6) համայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափազրույթ, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Քասախի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների (մասնագետի) կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման

լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Քասախի համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Քասախի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների (մասնագետի) կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան:

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն:

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո:

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից:

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիգամարգերում, կամ ճամփեզրին:

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14. Քասախ համայնքի սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Քասախի համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխությունը համաձայնեցնում է Քասախի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 51

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^{րդ} հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 4 դրական եզրակացությունը, Քասախ համայնքի ավագանու 2017թվականի փետրվարի 15-ի թիվ 9 որոշմամբ համայնքի ավագանին որոշում է.

Քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-065-0307-0205 կադաստրային ծածկագրով 0.02199 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսքի:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆԱԿՅԱՆ ԱՂԱՍԻ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ

3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՂՐԱԿ

4. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԵՂՐԱԿ

6. ՂԱԶԱՐՅԱՆ ՊԱՅՏԱՌ

7. ՄԿՐՏՅԱՆ ԳՐԵՏԱ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԱ ՄԿՐՏՅԱՆ